

ՀՀ ԶՈՒ Բանակային երրորդ կորպուսի հրամանատարությունը խրախուսեց ծառայության մեջ աչքի ընկած 30 զինծառայողի

2.09.2015

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի մշակույթի պալատում ՀՀ ԶՈՒ Բանակային երրորդ կորպուսի հրամանատարության նախաձեռնությամբ կայացավ կորպուսի գորամասերում օրինակելի ծառայությամբ աչքի ընկած եւ ծնունդով Գեղարքունիքի մարզը ներկայացնող 30 զինծառայողների եւ նրանց ծնողների հանդիպումը: Զինծառայողները հրամանատարության կողմից խրախուսվեցին իրենց ծնողներին ուղղված շնորհակալական նամակներով: Հանդիպմանը մասնակցում էին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, մարզպետի տեղակալներ Անդրանիկ Հակոբյանը եւ Կարեն Հակոբյանը, ՀՀ ԶՈՒ Բանակային երրորդ կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Օնիկ Գասպարյանը, Գեղարքունիքի մարզպետարանի, Գավառի քաղաքապետարանի աշխատակիցներ, Գեղարքունիքի մարզի ԵԿՄ անդամներ, Երրորդ բանակային կորպուսի գորամասերի հրամանատարներ, բարձրաստիճան սպաներ: Իր խոսքում Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը դրվատեց ՀՀ ԶՈՒ Բանակային երրորդ կորպուսի հրամանատարության նախաձեռնությունը եւ շնորհակալություն հայտնեց իրենց գորամասերում պարտաճանաչ ծառայությամբ աչքի ընկած զինվորներին ու նրանց ծնողներին: «Սիրելի զինվորներ, կեցցե՛ք. մենք հպարտ ենք ձեզով: Դուք մեր պատմության էջերում պատմություն եք կերտում՝ ձեր անպարտելիությամբ: Տեսական ժամանակ է, ինչ մեր պետական, քաղաքական ու հասարակական գործիչներն այցելում են սահմանապահ գորամասեր ու դիրքեր, քաջալերում մեր անդորրը հսկող հայ զինվորներին: Ես վստահ եմ, որ այս հանդիպման բարի ավանդույթը շարունակություն կունենա», - նշեց Գեղարքունիքի մարզպետը: Ներկաները դիտեցին ՀՀ ԶՈՒ Բանակային երրորդ կորպուսի կազմավորման եւ տարեգրության մասին պատմող վավերագրական ֆիլմ: Ելույթներով հանդես եկան նաեւ Գավառի Հ. Թալալյանի անվան երաժշտական դպրոցի եւ Գավառի երաժշտական ուսումնարանի սաները: Հայկական բանակի հզորության, բանակաշինության հետագա ամրապնդման մասին խոսեց երրորդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Օնիկ Գասպարյանը: «Մեր զինվորներ անպարտելի ոգու, բարձր մարտունակության շնորհիվ միայն կարող ենք պահպանել մեր սահմանները: Սիրելի ծնողներ, եթե կա այդ անսասան ոգին, ապա դա ձեր ներդրումն է, եւ այդ դեպքում ոչ միայն մեր սահմաններն են անառիկ, այլ ողջ Հայաստանի Հանրապետությունն է հուսալի ձեռքերում է», - նշեց կորպուսի հրամանատարը: Քաջալերանքի խոսքեր հնչեց զինվորի հայր Կարեն Ավետիսյանի կողմից:

Գեղարքունիքի մարզի ԵԿՄ ղեկավարության կողմից զինծառայողներից ութ լավագույնները պարգևատրվեցին պատվոգրերով: Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը շնորհակալագրով պարգևատրեց երրորդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Օնիկ Գասպարյանին: